ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/75

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2017թ. թիվ 26-3/23358-17 գրությամբ «Շանս շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06951096) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.12.2017թ. թիվ 1081-17 գրության հիման վրա, 14.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Շանս շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

1. **<u>ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանը 14.12.2017թ. թիվ 1081-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջները և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները՝ գործընթաց սկսելու նպատակով Ձեզ եմ ուղարկում Դիլիջանի համայնքապետարանի «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով հրատապության հիմքով մեկ անձից կատարվող գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելուց հրաժարվող մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմինե Աղաջանյանը և Արմենակ Հովհաննիսյանը:

2. **<u>«Շանս շին» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Շանս շին» ՍՊԸ-ն 27.12.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Շանս շին» ՍՊԸ-ն 22.11.2017թ. ներկայացրել է դիմում Դիլիջանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով հրատապության հիմքով մեկ անձից կատարվող գնման ընթացակարգի առաջին չափաբաժնին մասնակցելու համար: «Շանս շին» ՍՊԸ-ի առաջին չափաբաժնի համար ներկայացրած ընդհանուր գնային առաջարկը կազմել է 4,233,700 ՀՀ դրամ:

Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն «Շանս շին» ՍՊԸ-ն մերժել է «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը, քանի որ տեղի է ունեցել տեխնիկական սխալ՝ մասնավորապես, «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու փաստաթղթերը պատրաստելու և մուտքագրելու ժամանակ «Շանս շին» ՍՊԸ-ն մասնակցելիս է եղել նաև այլ ընթացակարգերի և մեկ այլ ընթացակարգի ընդհանուր գինը սխալմամբ ներկայացվել է որպես «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի ընդհանուր գին:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնվել է պաշտոնական ընթացակարգ «Շանս շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ «Շանս շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել»:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Քաջիկ Սաղումյանը և լիազորված ներկայացուցիչ Վահագն Անդրեասյանը:

2. <u>ՍՑ-ԷՍ-2017/75 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2017թ. թիվ 26-3/23358-17 գրությունը, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի 14.12.2017թ. թիվ 1081-17 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով հրատապության հիմքով մեկ անձից կատարվող գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 23.11.017թ. ժամը 14:00 նիստի թիվ 2, 29.11.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 և 13.12.2017թ. ժամը 16:00 նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը, «Շանս շին» ՍՊԸ-ի 27.12.2017թ. Խորհրդին ուղղված գրությունը.

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 185 շենքի տանիքի վերակառուցման աշխատանքների ձեռք բերման նպատակով հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ էր ներկայացրել նաև «Շանս շին» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝

- 23.11.017թ. ժամը 14:00 նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Շանս շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 4,233,700 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), և նույն կետով որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Շանս շին» ՍՊԸ-ին:
- 29.11.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից սահմանված ժամկետում ստացվել է դրական եզրակացություն, և նույն կետով որոշել է «Շանս շին» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի ընտրված մասնակից:
- 13.12.2017թ. ժամը 16:00 նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ ընտրված մասնակից «Շանս շին» ՍՊԸ-ի կողմից մերժվել է «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը:

«Շանս շին» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընկերությունը ճանաչվել է «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման Ընթացակարգի ընտրված մասնակից, սակայն մերժել է նույն ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը, քանի որ տեղի ունեցած տեխնիկական վրիպակի արդյունքում «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտով գնային առաջարկի փոխարեն թյուրիմացաբար ներկայացվել է մեկ այլ ընթացակարգի գնային առաջարկ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի՝

• 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

• 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով հրատապության հիմքով մեկ անձից կատարվող գնման ընթացակարգի հրավերի՝

• 9.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

• 9.3 կետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

• 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 6-րդ հոդվածի

• 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի՝

•1-ին մասի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

•2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

•3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով «Շանս շին» ՍՊԸ-ին ուղարկվել է «ՀՀ-ՏՄԴՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/2» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինիս կողմից նշված առաջարկը մերժվել է:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելով և պատվիրատուին

պայմանագրի ապահովումը չներկայացնելով հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ խախտելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 9.5 կետով սահմանված պահանջները:

Խորհուրդը գտնում է նաև, որ «Շանս շին» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2017թ. «Շանս շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06951096) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Շանս շին» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**